

## ԿԱԼՑԻՈՒՄԻ ՔԼՈՐԻԴ

10% ներարկման լուծույթ  
դեղի բժշկական կիրառման հրահանգ  
(սպառողների համար)

### Առևտրային անվանումը

ԿԱԼՑԻՈՒՄԻ ՔԼՈՐԻԴ:

### Միջազգային չպատենտավորված անվանումը (ՄՀԱ)

Calcium chloride:

### Որակական ու քանակական բաղադրությունը

Յուրաքանչյուր ամպուլ պարունակում է 5 մլ ներարկման ջուր և 1 գ կալցիումի քլորիդ:

### Թողարկման ձևը

10% -ոց ներարկման լուծույթ 5 մլ ամպուլներում:

### Դեղաբանական խումբը

Վիտամիններ, հանքանյութեր, էլեկտրոլիտներ:

### ԱԲՔ ծածկագիր

BO5X A07:

### Դեղաբանական ազդեցությունը

Կալցիումի աղբյուր է, որը կարևոր դեր ունի նյարդախթանների հաղորդականության, կմախքային և հարթ մկանունքի կրճատման, սրտամկանի աշխատանքի, ոսկրահյուսվածքի ձևավորման, արյան մակարդման պրոցեսներում: Նվազեցնում է բջջաթաղանթների և անոթապատի թափանցելիությունը՝ կանխելով բորբոքային ռեակցիաների զարգացումը, բարձրացնում է վարակների նկատմամբ օրգանիզմի դիմադրողականությունը և կարող է զգալիորեն ուժեղացնել ֆագոցիտոզը:

### Դեղակիներտիկան

Ներծծվելու համար կարևոր է որպեսզի այն լինի ջրալույծ, իոնացված ձևով: Սահմանափակ քանակով օրգանիզմ ներթափանցելիս ներծծվել իությունը խթանվում է ստամոքսի թթու միջավայրում, իսկ շիճուկի մեջ բարձր խտության պայմաններում այն թուլանում է: Թափանցում է ընկերքային պատնեշով, հայտնաբերվում կրծքի կաթի մեջ: Մեծ մասն արտազատվում է երիկամներով, չյուրացված մասը կղանքով:

### Ցուցումները

Օրգանիզմում կալցիումի պակասորդ՝

- թերհարվահանագեղձություն (гипопаратиреозидизм), պրկախտ, ռախիտ և D վիտամինի փոխանակության այլ խանգարումներ, հիմնագարություն, ոսկրակակղանք,
  - աճի ժամանակ, հղիության և կրծքով կերակրման ժամանակ,
  - ալերգային և մաշկային հիվանդություններ,
  - գերկալիումարյունություն, թերներծման համախտանիշ,
  - արտաքիրտավորմամբ (экзудация) բորբոքային պրոցես,
  - գերմագնեզիումարյունության ժամանակ՝ որպես հակաթույն:
- 10% լուծույթը կիրառվում է նաև սրտային վիրաբուժության մեջ ադրենալինի անարդյունավետության դեպքում:

### Կիրառման ձևերն ու դեղաչափերը

Կատարում են դանդաղ ներերակային ներարկում ( 1 մլ/րոպեից ոչ ավել) և կաթիլաներարկում:

Ներերակային կաթիլաներարկում կատարում են դանդաղ՝ ընդամենը 6 կաթիլ արագությամբ, մեծերին՝ 10 % լուծույթի 5-10 մլ (500 մգ-1 գ)՝ նախապես նոսրացնելով նատրիումի քլորիդի իզոտոնիկ լուծույթի

կամ գլխուկոզի 5% -ոց լուծույթի 100-200 մլ-ով:

Ներերակային ներարկում կատարում են դանդաղ, շիթային եղանակով՝ 3-5 րոպեի ընթացքում 10%-ոց լուծույթի 5 մլ:

Մանկական օրական դեղաչափն է 100-200 մգ/կգ-ը, առավելագույնը՝ 1-10 մլ/օրը:

Սրտային վիրաբուժության մեջ՝ ներսրտային ներարկում, անմիջապես փորոքի խոռոչի մեջ, քանի որ սրտամկանի մեջ թափանցելու դեպքում կարող է զարգանալ փորոքների թելքիկացմամբ սրտի տամպոնացում կամ պնևմոթորաքս: Մեծահասակների սովորական դեղաչափն է 200-800 մգ-ը (2-8 մլ)՝ անմիջապես փորոքի խոռոչի մեջ: Մանկական դեղաչափն է 0,2 մլ/կգ՝ մարմնի քաշին:

### **Հակացուցումները**

Դեղի ռիսկոզ պարզագույնություն, գերկալցիումարյունություն, փորոքների թելքիկացում:

### **Կողմնակի ազդեցությունները**

Գերզգայնության ռեակցիա՝ արյունահորդում, տաքության զգացում, վերջույթներում՝ ծակոց:

Սիրտանոթային համակարգի՝ արագ ն/ե ներարկման դեպքում զարկերակային ճնշման անկում, դանդաղասրտություն, փորոքների թելքիկացում, սրտի կանգ:

Տեղային՝ թրոմբոֆլեբիտ, շրջակա հյուսվածքների մեռուկ:

### **Դեղային փոխազդեցությունը**

Սրտային գլիկոզիդների հետ միաժամանակ ընդունման դեպքում ուժեղանում է դրանց ինոտրոպ ազդեցությունը:

Կալցիումի աղերի և թիազիդային միզամուղների կամ D վիտամինի միաժամանակ ընդունումից հնարավոր է գերկալցիումարյունություն:

Կորտիկոստերոիդները նվազեցնում են կալցիումի ներծծումը:

Կալցիումի աղերը նվազեցնում են ֆոսֆոնատների, ֆտորիդների, որոշ ֆտորքվինոլոններ և տետրացիկլինների ներծծումը:

### **Հատուկ հրահանգներ**

Դեղը բարակ ասեղի միջոցով պետք է ն/ե ուղիով դանդաղ ներարկել՝ խուսափելով անոթահունից շրջակա հյուսվածքների մեջ դեղի պատահական արտահոսքից, քանի որ առկա է շրջակա հյուսվածքների մեռուկացման մեծ վտանգ:

### **Փաթեթավորումը**

Միջնորմով կամ հատուկ խորշիկներով ստվարաթղթե տուփի մեջ՝ 10% լուծույթի 5 մլ 10-ական ամպուլ:

### **Դեղատնից բացթողման կարգը**

Դեղատոմսով:

### **Պահման պայմանները**

Չոր, լույսից պաշտպանված տեղում, + 15 - + 25 0C ջերմաստիճանի պայմաններում:

### **Պրտանիության ժամկետը**

10 տարի:

### **Արտադրող՝**

«Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲԸ,  
Հասցեն՝ Հայաստան, 0040, ք. Երևան, Աճառյան փ.,  
2-րդ նորահարկ, թիվ 6:  
Հեռ./ֆաքս. + (374 10) 62 74 10, հեռ.՝ 61 87 29: